## ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3

**<< ՋԿ-ՀՄԱԱՇՁԲ-20/2-Ա >> ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի**

ք. Երևան 04 հունիսի 2020թ.

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ՝ Կ. Ալեյան
Հանձնաժողովի անդամներ՝ Է. Մխիթարյանը, Կ. Սարգսյանը և Գ. Հունանյանը:
Քարտուղար՝ Ա. Սարգսյանը:

### Հանձնաժողովի նիստի օրակարգ

Գնահատող հանձնաժողովի 01.06.2020թ. N 2 արձանագրությամբ ՋԿ-ՀՄԱԱՇՁԲ-20/2-Ա ծածկագրով ընթացակարգի մասնակիցներ «Արփա-Սևան» ԲԲ, «Հարսնաձոր» ՍՊ և «Եղվարդշին» ԲԲ ընկերություններից պահանջված փաստաթղթերի ուսումնասիրության վերաբերյալ:

### Մասնակիցների կողմից ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքները

Հանձնաժողովի նիստում ելույթ ունեցավ հանձնաժողովի նախագահ Կ. Ալեյանը և նշեց, որ հանձնաժողովի 01.06.2020թ. N 2 արձանագրությամբ ՋԿ-ՀՄԱԱՇՁԲ-20/2-Ա ծածկագրով ընթացակարգի մասնակիցներ «Արփա-Սևան» ԲԲ, «Հարսնաձոր» ՍՊ և «Եղվարդշին» ԲԲ ընկերություններից, պահանջված փաստաթղթեր ներկայացրել է միայն վերաբերյալ «Արփա-Սևան» ԲԲ ընկերությունը (Հավելված 1.1):

### Հանձնաժողովի որոշումը

Փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքում հանձնաժողովը որոշեց.

1. Հիմք ընդունելով ՋԿ-ՀՄԱԱՇՁԲ-20/2-Ա ծածկագրով հրավերի 8.10 կետը՝ (Եթե սույն հրավերի 8.9-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա վերջինիս հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է) ընթացակարգի մասնակից «Հարսնաձոր» ՍՊ և «Եղվարդշին» ԲԲ ընկերությունների հայտերը մերժել,

**2.** Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի 40-րդ կետի 5)-րդ ենթակետը, ինչպես նաև ՋԿ-ՀՄԱԱՇՁԲ-20/2-Ա ծածկագրով ընթացակարգի հրավերի 8.6 և 8.7 կետերը, հանձնաժողովը հրավերի ոչ գնային պահանջները բավարարող

գնահատված մասնակից «Արփա-Սևան» ԲԲԸ-ին հրավիրում է գնի նվազեցման շուրջ բանակցությունների, որը տեղի է ունեցել 08.06.2020 թվականին ժամը 11:00-ին, Ջրային կոմիտեի շենքում (ք. Երևան, Վարդանանց 13ա):

**Հանձնաժողովի հաջորդ նիստի վերաբերյալ**

---

- Գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել ըստ անհրաժեշտության, որը տեղի կունենա Ջրային կոմիտեի վարչական շենքում:

Ընդունվել է որոշում՝ կողմ-5, դեմ-0

Գնահատող հանձնաժողովի՝

Նախագահ՝ _____ Կ. Ալեյան

Անդամներ _____ Է. Մխիթարյան

_____ Կ. Սարգսյան

_____ Գ. Հունանյան

Քարտուղար _____ Ա. Սարգսյան